

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 9-Ի N 1630-Ն  
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

29 դեկտեմբերի 2011 թ.  
N 1914-Ն

Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի դեկտեմբերի 9-ի «Հարկային մարմնից հարկային հաշիվների ձևերի ձեռքբերման գինը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեին արտաբյուջետային հաշիվ բացելու թույլտվություն տալու մասին» N 1630-Ն որոշումը լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ նոր 2.1-ին, 2.2-րդ և 2.3-րդ կետերով.

«2.1. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետով սահմանված գինը կիրառվում է մինչև 2012 թվականի մայիսի 1-ը ձեռք բերվող հարկային հաշիվների ձևերի համար:

2.2. 2012 թվականի մայիսի 1-ից հետո հարկային մարմնից ձեռք բերվող հարկային հաշիվների ձևերի մեկ էջի ձեռքբերման գինը սահմանել 25 դրամ:

2.3. Սահմանել, որ մինչև 2012 թվականի մայիսի 1-ը ձեռք բերված հարկային հաշիվների ձևերով հարկային հաշիվներ կարող են դուրս գրվել մինչև 2012 թվականի հունիսի 30-ը ներառյալ:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2012 թվականի հունվարի 1-ից:

Հայաստանի Հանրապետության  
վարչապետ

S. Սարգսյան

13 հունվարի 2012 թ.  
Երևան